

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 4
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2017թ. ապրիլի 28-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:
Զեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:
2. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վերանվանման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան:
3. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Աննա Յուրիի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան:
4. Ընթացիկ հարց: Ռ.Ադուգումցյանի և Լ.Պետրոսյանի՝ ՌԴ Մոսկվա և Բելգորոդ քաղաքներ գործուղման վերաբերյալ հաշվետվություն:
Զեկուցող՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Ադուգումցյան
5. Ընթացիկ հարց: «Մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգ»-ի հաստատում:
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:
6. Ընթացիկ հարց: «Մագիստրատուրայի ընդունելության անցկացման կարգ»-ի հաստատում:
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:
7. Հայաստանի Հանրապետության 2018թ. պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի հայտը («Հումանիտար հետազոտությունների կենտրոն» («Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գ/հ լաբորատորիա» «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն») երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան:

1. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը. Ա.Եզեկյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

2. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վերանվանման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան:

Զեկուցողը նշեց, որ քաղաքական գիտության զարգացման տրամաբանության շրջանակներում ՀՀ ՊԿԱ քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնը մագիստրոսական նոր կրթական ծրագրեր է մշակել՝ «Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն», «Քաղաքական ժուռնալիստիկա և PR տեխնոլոգիաներ»: Միաժամանակ շարունակում է իրականացնել «Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն» մասնագիտացմամբ մագիստրոսական կրթական ծրագիրը: Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև ՀՀ ՊԿԱ առաքելությունը, Մ.Մարգարյանն առաջարկեց քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնը վերանվանել «Քաղաքական կառավարում և հանրային քաղաքականություն»:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Չատինյանը, Խ.Բեզիրջյանը:

Որոշեցին՝ «Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն» ամբիոնը վերանվանել «Քաղաքական կառավարում և հանրային քաղաքականություն»:

3. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Աննա Յուրիի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան:

Զեկուցողը նշեց, որ ամբիոնում 2017թ. ապրիլի 10-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Աննա Յուրիի Կարապետյանի «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում բախվող դրույթների կերպափոխումը միջազգային փորձի դիտարկման համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին՝ Աննա Յուրիի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացումը ժամանակակից քաղաքական գործընթացների համատեքստում» վերտառությամբ:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը, Ն.Ղազարյանը:

Որոշեցին՝ Աննա Յուրիի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացումը ժամանակակից քաղաքական գործընթացների համատեքստում» վերտառությամբ:

4. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Ռ.Ադուզումցյանի և Լ.Պետրոսյանի՝ ՌԴ Մոսկվա և Բելգորոդ քաղաքներ գործուղման վերաբերյալ հաշվետվությունը:

Զեկուցող՝ Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Ադուզումցյան:

Զեկուցողը նշեց, որ նույն ամբիոնի հ.գ.թ. դոցենտ Լաուրա Պետրոսյանի հետ սույն թվականի ապրիլի 6-ից 13-ը աշխատանքային այցով գտնվել են ՌԴ Մոսկվա, Բելգորոդ քաղաքներում: Ռուսաստանի դաշնության գիտությունների ակադեմիայի հոգեբանության ինստիտուտում նրանք մասնակցել են «Աշխատանքի, ինժեներական հոգեբանության և էրգոնոմիկայի արդիական հիմնախնդիրները» խորագրով գիտագործնական սեմինարին: Սեմինարին զեկուցով հանդես է եկել նաև պրոֆեսոր Ռ. Ադուզումցյանը՝ «Ուղևորների հոգեբանական անվտանգությունը տեխնածին աշխարհում»: Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանում մանկավարժական ինստիտուտի հոգեբանության ֆակուլտետում նրանք մասնակցել են «Կրթության ստանդարտացման համատեքստում անձի զարգացումը. իմաստների հազեցում միջազգային կլոր սեղանին»: Դոցենտ Լ. Պետրոսյանը ներկայացրել է «Հասուն անձի հոգեբանական բաղադրիչների վերլուծությունը» թեմայով զեկույց: Այնուհետև տեղի են ունեցել «վարպետաց դասեր», որտեղ պրոֆեսոր Ռ. Ադուզումցյանը ներկայացրել է մասնագիտական կողմնորոշման և անձնակազմի ընտրության հոգեբանության խնդիրները: Ինչպես նաև այցելության ընթացքում համաձայն Բելգորոդի ՊԱՀՀ մանկավարժական ինստիտուտի համագործակցության պայմանագրի՝ քննարկվել են երկու բուհերի միջև կառավարման հոգեբանության մասնագիտության գծով ուսանողների շարժունության հնարավորությունները: Համաձայնեցվել են Կառավարչական պրակտիկայի և մի քանի ուսումնական առարկաների ծրագրերը, ինչը հնարավորություն կտա ապահովել մագիստրանտների պրակտիկայի անցկացումը ինչպես Հայաստանում, այնպես էլ Բելգորոդում: Փոխհամաձայնություն է ձեռք բերվել նաև հեռավար վարպետաց դասեր անցկացնելու վերաբերյալ: Պրոֆեսոր Ռ. Ադուզումցյանը նշեց նաև, որ համագործակցության վերաբերյալ ծավալուն հարցազրույց է տվել Բելգորոդի համալսարանական հեռուստատեսությունում:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Թ.Խեչոյանը, Գ.Զատինյանը, Գ.Գսպոյանը, Մ.Մարգարյանը:

Որոշեցին՝ Ռ.Ադուզումցյանի և Լ.Պետրոսյանի՝ ՌԴ Մոսկվա և Բելգորոդ քաղաքներ գործուղման վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն (կից ներկայացվում է):

5.Լսեցին՝ Ընթացիկ հարց: «Մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգ»-ի հաստատման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Զատինյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Թ.Խեչոյանը, Գ.Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ Հաստատել «Մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգ»-ը (կից ներկայացվում է):

6. Լսեցին՝ Ընթացիկ հարց: «Մագիստրատուրայի ընդունելության անցկացման կարգ»-ի հաստատման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Թ.Խեչոյանը, Գ.Չատինյանը, Գ.Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ Հաստատել «Մագիստրատուրայի ընդունելության անցկացման կարգ»-ը (կից ներկայացվում է):

7.Լսեցին՝ 2018թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի հայտը («Հումանիտար հետազոտությունների կենտրոն» («Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գ/հ լաբորատորիա» «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն») երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան:

Զեկուցողը ներկայացրեց հայտի հիմնական դրույթները (կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Չատինյանը, Գ.Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ Երաշխավորել և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե ներկայացնել Հայաստանի Հանրապետության 2018թ. պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի հայտը («Հումանիտար հետազոտությունների կենտրոն» («Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն», «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գ/հ լաբորատորիա» «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն»):

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան

28 ապրիլի 2017թ.

Կ.Տ.

